Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Քնարիկ
282
283
284
285
286
287

910.4
1-15

750
210

2004

ԿԱԶՄԱՏՈՒՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՒՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չախմախճըլար Մեծ Նոր խան Թիւ 5-6

# ԳԱՂԹԱԿԱՆՔ
# ՀԱՅՈՑ

ԳՐԵՑ

ԵՍԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԵՒՈՆԴԵԱՆ
ԱՊԱՀՈՒՆԵԱՑ

## ԳԻՐՔ Ա.

ԺՈՂՈՎՐԴԱՍԷՐ ԸՆԿԵՐ. ՊԱՂԱՑՈՒ

*Արագս գուլալէ ,*
*Քու սպտոր ալիքը ։*
*Ջուր տուր որ լուանք ,*
*Մեր արնոտ շալիկը ։*

ԳՐԱԴԱՐԱՆ
Թիւ ____
ԳԻՄԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

13285

18285
285-2016

# ԱԶԴ

Այս փոքրիկ պատմութիւն՝ մեր հայրենակից Հայ գաղթականաց կրած աղէտից ճշգ-նկարագիրն է, որոյ տողերը աղի արտասուաց մէկ մէկ պղտոր աղբերակներ են այն սրտերուն համար. որոնք Հայութեան սուրբ սիրոյ զգացումներ կը կրեն ։

Սուրն և սովը շատ հեղ 'ի սաստ հարուածեր են զՀայաստան, սակայն չ'են կարօղացեր Հայ ազգի սիրտն ու սէրը խալառ խլել կարել Հայոց ազնիւ աշխարհէն. օտար հողն զՀայն իւր կեանքէն կը զրկէ. Հայն միայն 'ի Հայաստանն կարօղ է իւրեն ոգւոյ ազատութեան շունչը շնչել . . . . ։

Հայ եղբա՛րք, ընդունեցէ՛ք մեր այս դոյզն երկասիրութիւն, զոր Ձեզ կ'ընծայեմ . . . ։ Թո՛ղ Ձեր սրտի ազնուութիւնը կանգնի կոթող մշտնջենաւոր այն քաջ նահատակաց շիրմին վերայ, որոնք Հզօրաց կրճի գագաթը կեցած կենդանի վկայ են Հայոց քաջութեան, դիտելով զերկնահամբոյր լեառն Մասեաց և զդաշտն Արարատեան, զոր մեր վեհ Նախնեացն անունք երբեմն պսակէր զայն ։

# ԳԱՂԹԱԿԱՆՔ
# ՀԱՅՈՑ

## ԳԼՈՒԽ Ա.

ԻՄ բուն հայրենիք Աղահայ գաւառն է, Լիզ գիւղի մէջ ծնած եմ ես իմ մօրէն (1838 Յուլիսի 13ին)։ Անդ թաղուած կան ՚ի հողը՝ իմ նախնիքը․ Լիզ գիւղի արեւմտից հիւսիսոյ կողմն, Աղավ ադբիւրի գլուխ, Խորուտ ձորու. ճամբուն մէջ տեղը։

Հօրս անուն Յակոբ էր՝ ու մօրս Մարան, որոց անդրանիկն ես եմ․ հայրս եւ մայրս խիստ սիրով էին միմեանց հետ․ իրենց ամուսնական պարզ սրտի մէջ չ՚կար երբէ՛ք ո՛չ կեղծ հաճութիւն եւ ո՛չ մի շողոքորթ հայեացը․ այլ սուրբ դաշնամբ մի սիրտ եւ մի մարմին էին այս անմեղ զոյգ լծակիցք։

Հայրս ո՛չ շատ ընչեղ եւ ո՛չ շատ աղքատ․ այլ միջին կարգի երկրագործ մարդ մի էր, ինքըն իր վիճակէն գոհ մէկն, որ շատ որբոց եւ տնանկաց ալ խնամք կը տանէր իր գթոտ խղճմտանօք․ մինչ դեռ դարուս մէջ շատ հարուստներ կան, որ իրենց տան դռները աղքատին

դիմաց կը փախչին և չե՛ն ուզեր իրենց տաշտէն ընկեր մը հաց անոնց բաժին տալ ։

## ԳԼՈՒԽ Բ.

Երազի պէս միտքս կուգայ, սոսափիկ սով մը տեղաց մեր աշխարհը, տեղացի Հայ ժողովուրդք հացը չ'գտնելով սկսեցին կանկառ և անելուկ խոտերու սերմերն երկանով աղալ և ուտել ։

Արդ փորձառու Հայերը՝ տեսնելով որ ալ կարօղ չ'են դիմանալ սովին, որ հրեղէն սուրի պէս աջ և ահեակ կտրելով կը կտորէր իրենց ազգակից եղբարցը, միաձայն հաւանութեամբ յորդոր կարդացին Հայ որերոյն թէ ։

Պէտք է որ կարօղութեան տէր մարդիկը մէկ մէկ գրաստ առնեն, և իրենց կահ կարասիքը անոնց վրայ բառնան, երկրէն դուրս ելնան. և չմնան այն տեղերը սովամահ մեռնին ։

Ուստի հետ զհետէ սկսեցին գաղթել, գաղթողներէն ոմանք ալ մէկ մէկ աղքատիկ այր և կին իրենց հետ առին. իրենց հացէն նոյն բաժինը հանեցին. և յոյս հարան աստուծոյ՝ թո՛ղ տալով իրենց տունէր տեղերը և դէպ 'ի Արարատեան աշխարհը գաղթել

## ԳԼՈՒԽ Գ.

Գաղթելոց թիւն տասն հազար տան կը

հաւնէր , որք յժամադայ գաւառներէն էին , Սասունայ , Խութայ , Բզնունեաց , Խլաթայ , Հայկաց , Հաշտենից , Հարքայ , Ապահունեաց , Խընուսայ , և շատ մը ուրիշ տեղերէ · որոնք խումբ խումբ բաժնուած՝ կարգաւ մէկ մէկի ետեւէ իրենց դէմքը դէպ 'ի արեւելքը ուղղելով կ'երթային · որոց հետ էինք և մենք ։

Մայրս մեր տան դրան առաջ ծին հեծաւ , որուն վրայ բարձած էինք մեր կահ կարասիքը · և զիս իր գիրկն առաւ , հայրս ալ մեր անասուններն իրեն առջևը ձգեց · թո՛ղ տուինք մեր տունը ամայի · և լալով աչօք մեկնեցանք ։

## ԳԼՈՒԽ Դ ·

Տարի կէս սովը անեց՝ (1842 սեպտեմբեր 23) ին էր , երբ մեր գիւղացիքը գիւղի գլխաց Հրանտ գետի եզրը ջոկ կարաւան մը կազմելով ճամբայ ելան · ճիչ , աղաղակը , ողբք և արտասուքը մարդուս սիրտը կը ճմլէին ։

Մեր գիւղացի Հայ աղջկունք՝ իրենց գլխի չէկէկ հերքը փետելով , ճամբու այս կողմն և այն կողմն բուսած վարդենեաց ճիւղերէն կը կախէին 'ի նշան սիրոյ և կրկին դարձին · քանզի սոքա թէև առ Հարկի սովոյն ստիպեցան օտար երկիրները դաղթել ։

Սակայն իրենց սիրտ ու միտքը անքակ կապուած էր այն մայրենի աշխարհին հետ , որոյ գիրկը ծնած և սնած էին իրենք , կը սիրէին

օրտի մօտ այն սուրբ հողը, յորոյ վերայ լոյս արեւ տեսին իրենց աչքը :

Մեր կարաւանը հետ զհետէ առաջանալ ըս-կըսաւ մինչ 'գիւղը․ խոպառ մեր աչքէն անհե-տացաւ, արեւը կապոյտ երկնից մէջ տեղը հա-սած սաստիկ տօթ մը կար այս միջոց․ երբ թան-ձըր մշուշ մը մեր դաշտավայր երկրին երեսը բռնած կը պատէր :

## ԳԼՈՒԽ Ե․

Մեր առաջ գնացօղ գաղթեալ մարդոցմէն շատ մը այր և կին՝ անօթնէ քայլ մը փոխե-լու կարողութիւնը չ'ունալով նոցա ծունկները, թուլցած ընկած էին ճամբուն մէջ տեղը :

Ասոնք այն աղետալի յետին տագնապին մէջն էին, որ մարդս արմատէն կտրած ծաղկի պէս գունաթափ եղած կը թառամի, և 'ի վեր-ջին վիշտս կը հեծէ ցաւօք սրտի իր շունչ ար-ձակել, քանզի նորա կենաց արեւը կը մանայ :

Արդ այս աղետալի դէպքը տեսնօղների սիրտը 'ի դութ շարժեց, որով երբ Ջրանոց տապանը հասանք, բեռները մօտակայ աղբիւ-րին գլուխը դրեցինք․ կարաւանը այն տեղը նստա-բաւ :

Կտրիճ ազատորդիքը յետ դարձան ճամբու-հետ մեռածները թաղել․ և կանայքն ալ յար-տասուս փղձկելով՝ նստան կոծել իրենց անձինքը հառաչելով 'ի սուգ թախծութեան :

## ԳԼՈՒԽ Զ.

Երբ տեսայ՝ որ մայրս ալ նոյն կանանց հետ աղէկէզ սրտիւ կը մաղթէր և կու լայր, ես ալ սաստիկ ճիչ մը բարձի, և սկսայ լալ, այնպէս որ ալ ուրիշ կերպով մը հնար չեղաւ ձայնս կըտրել մինչև որ . . .

Մայրս նստած տեղէն վեր ելաւ. ձեռքս բռնեց, աղբիւրի գլուխը գնացինք, նա զով ջրով երեսս լուաց, և սրբեց զայն իր արտասուօք թրջած թաշկինակաւ։

Ետքը իմ ծնօտքը իր քնքուշ ձեռքերուն մէջ ամփոփեց, գլուխս վեր վերցուց և կաթոգին սիրով մը իմ երկուց այտից երկու անմահ համբոյր դրոշմեց և ըսաւ։

Արևիդ մատաղ կը լինիմ իմ հոգւոյ կտոր և ծոցիս ծաղի՛կ, դեռ մայրդ մեռած չ՚է՝ որ դու կուլաս, մի՛ լա՛ր աչքիս լոյս մի՛ լա՛ր. ա՛ռ. քեզ ծիծը. ահա՛ մօրդ քաղցր կաթը, անո՛ւշ անո՛ւշ ծծէ, և հանգիստ գիրկս քնացի՛ր։

Այս խօսքերը ասած միջոց տեսայ որ՝ մօրս աչքերէն երկու կաթ արտասուքը գլորելով երեսին վրայ անկան, զոր ցարդ կը յիշեմ և աղիքս կը գալարին . . .։

«Երախտագէտ որդւոյ մը համար իր մօր աչքերէն թափած մի՚ կաթ արտասուքը սուր սլաք է իրեն սրտին երբ զայն կը յիշէ իր միայնութեան մէջ»։

## ԳԼՈՒԽ Է.

Տօրս գիրկը քնացեր էի . երբ խղճատ մայրս և անդէն վեր ելաւ , սթափելով քնէս արթընցայ . տեսայ որ հայրս և մայրս միասին մեր բնակեալէն քիչ մը հեռի գարի մը կողը տալով դէպ 'ի վեր կ'ելնեն , փոքր ինչ առաջ երթալով կանգ առին . . . :

Մեզնից քանի մը քայլ անդին առոյգ հասակաւ կին մը քօղը իրեն երեսին քաշած քիչ խոտերով ծածկեալ ծիլ քարի մը իր մէջքը տալով անշա՛րժ թիկնած կ'երևէր :

Վեցամեայ գրկանոց մանկիկ մ'աղ անոր գիրկը մտած ողջ դէմքը իրեն մօր երկու ըստեանց մէջ թաղելով որպէս թէ կաթն կը դիէր :

Այս գթալից երևոյթը մօրս սիրտը շարժեց . որով վաղեց գնաց խեղճ կնոջ երեսի քօղը վեր առաւ . անոր ձեռքը բռնեց , և ցած ձայնով մը կանչեց :

Քոյր իմ , քոյր իմ , ելի՛ր ելի՛ր . ահա՛ արևը մտաւ , ուշ է՛ այս տեղը մինակ մնալ աղէկ չէ՛ . ելի՛ր երթա՛նք , մենք զքեզ մեզի հետ կը տանինք :

Մայրս ողորմելի կնոջ թևը թօ՛ղ տալով ձեռքը նորա սառած կուրծքին տարաւ , և այն տեղէն ալ փոխելով իր ճկոյթը մատաղ երախայի բերանը դրեց . . .

Այն ինչ տեսաւ որ մանկան հագագն և շնչառութիւնն ալ դադրած են , 'ի նոյն պլաց

որ երկուքն ալ մեռած են :

Ըստի աչքերը արտասուօք լցուած սուգալով մը մայրս յետ դարձաւ, սուր ակնարկ մը ինձ վրայ ձգեց, և ապո՛ւշ կերպով մը հօրս երեսը նայելով լռաւ :

Մա՛րդ Աստուած մեր մեղքը մեր երեսը չ'դարնէ . . . երանի՛ տղային որ իր մօր գիրկը դարձեր է իրեն գերեզման . քալէ՛ մարդ քալէ՛ մի՛ կանգնիր մեռածները թաղել պէտք է :

## ԳԼՈՒԽ Ը.

Հօրս և մօրս հետ միասին մեր բնակարանը դարձանք, հայրս քանի մը մարդ իր հետն առաւ, անօթնէ մեռնող խեղճ կինը և նորա որդին թաղել գնաց :

Իսկ մայրս ալ գլուխ գիրկը առած աղբերբ գլուխն երթալով գալով անմռունչ կը հեծէր, և գի՛լ գի՛լ արտասուքը իրեն աչքերէն կը թափէին :

Հայրս եկաւ, արեւն ալ մտաւ, այս հողագունդ մթութեան խաւարը թաղելով մեր երկրին երեսը համատարած խաւար մը պատեց :

Փայլուն աստղերը Հայաստանի բարձրակամար երկնից խորութեան մէջ գոյն գզոյն փայլակն արձակելով կը շողշողէին :

Երբ մահաբեր սովի սրով հարուած խումբ մը խեղճ Հայ աղջիկք, խալաւ չունչ կարած Քենայ լեռան սև քարերուն ողնելով արտասուաց հեղեղի մէջ կը խեղդուէին աղաղակելով :

Աստուած զմեզ ազատէ Աստուա՛ծ․ կամ հաց տո՛ւր կամ մահ․ սովը մեր մէջը կոտրեց, ոտքի վրայ կարօղ չենք կանգնիլ, մեր զօրութիւնը հատաւ ։

## ԳԼՈՒԽ Թ.

Գիշերը սգով անցաւ, բարի լոյսը բացուաւ, մայրս զիս քնից հանեց, ձեռքս բռնեց, աղբիւրի գլուխը գնացինք, երեսս լուաց և զիս իր հետ առաւ․ քիչ մը առաջ երթալով բարձր քարի մը ընթերը հասինք ։

Մայրս իր երեսը դէպ 'ի աղօթարան ուղղելով ըսաւ ինձ, ձեռքերդ վեր վերցուր և ինքըն աղօթել սկսաւ ։

Օրհնեա՛լ ես բարի լուսոյ Աստուած, Օրհնեա՛լ է քու նախախնամ էութիւնը, Օրհնեա՛լ ես լոյս և մութն ընող Աստուած․ Քու աջ աջը թո՛ղ մեր գլխու վրայ լինի․ Օրհնեալ ես Աստուա՛ծ քու անհուն սիրոյ համար թո՛ղ եղնի, դու իմ գլխաւորը Ամէն չար փորձանքէն ազատ պահէ, Աստուա՛ծ դու զիմ հոգին անոր գիրկն առնես, թո՛ղ ես նորա ոտից տակը մեռնիմ․ Ծովի և ցամաքի Աստուած, լոյս և ճար ընող Աստուած, բա՛ց մեր դէմ քու անհուն ողորմութեան դուռներըն, մեր յոյս և ապաւէն դու ես Աստուա՛ծ, մատաղ երախայիս զմեզ խնայէ՛ Աստուա՛ծ, որոյ ձեռքերը բռնելով քու գթութեան գիրկը կը դիմենք, փա՛ռք քեզ բա-

բերար Աստուա՛ծ, դու ամէն աղքատին և որբ-նանկին ողորմիս ինչպէս որ մեզ ալ Աստուած, փա՛ռք քեզ երէց թռչնոց և ամէն լից Աստը-ւած, գոհանամք զքէն և քու սանէն, թո՛ղ քու բարի կամքն եղնի, ինչ որ դու կամիս Աստուած. քեզ միայն փա՛ռք վայելէս ամէն:

## ԳԼՈՒԽ Ժ.

Մայրս խեր սրտառուչ աղօթքը աւարտեց, յետ դարձանք, և մեր կաւ կարասիքը ձիու վրան բարձանք ու ճամբայ ելանք . . . :

Արևը նոր առաւ, շողը Սուրբ սարի գլուխը զարկեց, մինչդեռ մենք մօտակայ լերանց հու-րան ու ցուրանը կտրելով կ՚անցնէինք ձորերու մէջէն մայր բարեաւ (1) ասելով:

Հայ թռչունն ալ իր աչքերը արցունքով լցուած, լեռնէն իջաւ մեր դիմաց երթա՛յք բարեաւ ասելու. երգե՛ց հեծեց և խոյս տալով խա-տերու մէջ ողբ ՚ի բերան (2) կրկին դարձ էաւ իր բոյնը սղալ Հարք գաւառի ամայի մնացած սար ու ձորեր դաշտ ու հովիտները:

Սուրբ սարի թևէն վար իջանք, Եփրատ գե-տոյն անդին անցանք, Նոր Աղենայ ակոն, աղխտակ աղբիւրի գլուխը բեռներ դրեցինք հանգ. առնելու:

## ԳԼՈՒԽ ԺԱ․

Անդ աղբիւրի Թումբը բուսած վարդենեաց թուփերէն կարմիր մեծ օձ մը դուրս ելաւ ․ յանկարծ ութամեայ փոքր տղայի մը վրայ արձակելով կայծակէ աչօք զարկեց զայն գետին փռեց , և ինքը սողալով փախչել սկսաւ ։

Խարտեաշ մազերով , և առոյգ հասակաւ , տասներեքամեայ Մթխալ անուն Հայ աղջիկ մը՝ տեսնելով այս մահառիթ աղէտը , վեհ արութեամբ խորամանկ օձու ետևէն վազեց հասաւ , և թեղի փայտով մը օձու գլխուն և մէջքին զարնելով սպաննեց զայն ։

Մթխալը օձ սպաննելէն ետք օձու եղջերքը փրցուց իր ծոցը դրեց 'ի վարձ իւր քաջութեան և աչագին օձու տուտէն բռնելով չիչխան՝ հաստ ծառի մը ճիւղին վրայ ձգեց զայն 'ի տես (3) ամէնից ։

Արդ Մթխալը գովեստ քաջութեան ժառանգեց (4) և օձահար պատանին մէկ ժամէն ետք հեղձամղձուկ լինելով մեռաւ (5) որոյ մարմինը սպիտակ աղբիւրի գլուխը թաղեցին , և տեղւոյն անունը փոխելով օձահարի աղբիւր դրեցին մինչև ցայսօր ։

## ԳԼՈՒԽ ԺԲ․

Մինչ 'ի մուտ Արևին այն տեղը մնացինք ուր կորիճ տղայք Եփրատ գետէն ձուկը որսալով մեզի բերին եղով տապկեցինք կերանք ։

Կանայք ալ մինչ մթնեց հացը կոփեցին ըն-թացան, երբ լուսին Սիմ լեռան կողէն իր բոլոր երեսը դուրս հանեց բեռները բարձանք, և հով գիշերով ճամբայ ելանք։

Այն կերպ խոր լռութեամբ մը ճամբան կերթայինք, որ գիշերային թմլիչ թմրութիւն մը մարդկեղէն բնութեան վրան թափելով 'ի քուն քաշել կ'ամփէ զայն։

Լուսին հետ զհետէ վեր կ'ելնէր դէպ 'ի Հայոց սարդ Նըմնից ճակատը, աստղերը նորա ոսկեգոյն լուսոյն մէջ կը պաղպաջային իբրև փայ-լուն անդամանդ։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Անտառախիտ խոր ձորի մը մէջէն կ'երթա-յինք, աստի և անտի բարձրաբերձ ծայռերու-տակէն կարկաչաձայն առուակները հոսելով ըն-ընթաց գետակ մը կը կազմէին, որ լուսնին շա-ղով 'ի ժայռէ դէմ կը սահէր ու կ'անցնէր։

Այս գով գիշերին մէջ ուրիշ ձայն մը չ'էր լսուեր. միայն Յոխակ թռչնոյն սրտառուչ հըծ-ծիւնը բարձր և խիտ առ խիտ եղած կաղմա-խեաց մէջէն մերթ կ'ելնէր, զոր Հիւսիսային հովը մեր ականջին կ'հնչէր։

Թուխ թէ խեղճ թռչունն ալ երազին մէջ վարդ տեսնելով զբաղած էր զայն սիրաբանել։
(6) «Չիք ինչ աղգ մեղի վերծ 'ի հոգւոց։

Տակաւին մեր կարաւանը սար ու ձորը կը

կորչէր ու կ՚անցնէր , այն ինչ թռչունները հա-
մաձայն կը սկսէին 'ի նուագ օրհնութեանն փա-
ռաբանել զբնութեանն Աստուածը , որ 'ի քաղ-
ցըր ակնարկս ձայն տիեզերքը կը նախախնամէ ։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Մօրս գիրկը քնացեր էի , շատ և քիչ եր-
թալը չգիտեմ , « քանզի Մարդ որ կայ անթև
հաւքէ » կ՚ըսէ առած մը ։ Արևը ծագեր էր ,
մայրս զիս կը կանչէր ։

Ելի՛ր ելի՛ր տե՛ս թէ ո՛ւր հասանք ։

Երկայն և լայն դաշտի մը մէջ տեղը հասեր
էինք , այն տեղէն մայրս Արևելից հիւսիսոյ
կողմն կլոր ու բարձր սար մը ինծ ցոյց տուաւ
մատով ։

Ապա՛հ որևիդ մատաղ , կը տեսնես է՛ հա
Ցուգաւէտ է այն բարձր սարին անունը , սուրբ
կայ այն տեղը , սուրբը քու սրտի փափագը լե-
ցընէ , իմ անո՞ւշ որդի , իջնիր փոքր ինչ քալենք
որ հանգչինք ։

Ձիէն վար իջանք , մայրս ձեռքս բռներ կա-
կուղ հողի վրայ հետևոտս ուշի՛կ ուշի՛կ կ՚եր-
թայինք . « Պարզ կացութեան մէջ սէրը կը շա-
ղայ » ։

Ես խոկ էի այս անմեղ զոյգ էակաց սիրոյ
և համակրութեան միակ առարկան . քանզի երբ
իմ վրայ իրենց աչքը կը յառէին փոխխս զըր-
կախառնութեան մը 'ի նոյն միմեանց սէր կը

հաշտուելին . և երկնային ժպիտ մը անոնց երեսին վրայ կը ծաւալէր ։

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Ահա՛ այսպէս խինդ 'ի սիրտ երթալով, մութ մտաւ Սուդայ սարի տակը հասանք, մեր բեռները այն բարձր ժայռին առաջ դրեցինք զոր Ոսկի սեղան կը կոչեն ։

Ճղած քարէն սառն ջուր գլգլալով կը հոսէր, և ոլոր մոլոր վերէն վար կը սողար ու կ'երթար ժայռի առջին եղած ծառախիտ պուրակին ծոցը կ'անհետէր ։

Մինչդեռ ուղտը կ'պառկէին տեղը չինել, և կանայքն ալ կաճղ կը ժողվէին որ գիշեր ցրտոյն կրակը վառեն . Սուդայ սարի կողը ոչխար արածող հովիւք սկսեցին 'ի գոյն Արարայ (1) սուլել զսրինգ որոց քաղցր ձայնը քարերն ու թփեր 'ի լաց կը շարժէր ։

Պահ մը անցաւ, հետևեալ երգն ալ մեր Հայ աղջիկները սկսեցին առնել 'ի ծոց գիշերային լռութեան . անձաւներ ձայն տալով թմրութեան սարսափ մը մեր վրայ կը թափէին ։

### ԵՐԳ.

« Լուսին էր Աւագ լուսին,
« Գիշերը կ'երթար Անհոլին,
« Կ'երթար վեր ՀԱՅԼՈՐ ՍԱՐԻՆ,

« Գլուխ դնել Անեղ Էլին, . . . :
« Աստղիկ Այգին էր խոր քուն,
« Ծըծերը բացեր դէմ տաանդնուն :
« Ծըծերուն մէջ կայր մի նշան :
« Գձկայ որ պագեմ ընշան :
« Զիս տարաւ սէր Աստղկան,
« Գլորայ անկայ 'ի Ջնտան » :

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Դա է Աղլին (1) Սարի ձախ թևի տակէն լուսին դուրս ելաւ, դար ու դաշտ դեղին լոյս մը զգեցաւ, երկնից աստղերը վերջն կը պլպլձային, սարերն ու ձորերն ալ վարէն լուսնին շուքով կը ժպտէին, և զովագին հով մը կ'շնչէր :

Գիշերը կէսն եղաւ Սուգայ սարի տակէն ճամբայ ելանք : Լուսին որ երկնից օդին պարզութեան մէջ կը լողար ու կը թուալէր խանդաղակաթ՝ սիրով Հայոց Վեհ լերանց ճակատին իր ոգեշարժ համբոյրը կնքել :

Այն ալ իր մշտական շրջան աւարտեց և 'ի դոյն վարդի չփկնելով փութաց իր հարսնութեան առագաստը մտնել, և հեղեղ բնոյն զիս բարձնալ տարաւ :

## ԳԼՈՒԽ ԺԷ.

Հինգ օրը դէպ 'ի Արևելքը գնալով Մասեաց սարի աջ թևը Զօրայ Ակնձը հասեր էինք.

քնից ելայ տեսայ որ մայրս գլխս գրկած ձիուն վրան նստած խոր ձորի մը միջէն կ՚անցնէինք ։

Միջօրէ էր , մայրս կտոր մը հացի վրայ հովու կողի դրեց · և ինձ տուաւ կ՚ուտէի , յանկարծ երկու հեղ հրացանի ձայն ելաւ , և մեր առջին գնացող մարդոց մէջ սաստիկ աղմուկ մը ձգեց , որով արհաւիրք մը զմեզ կը պատէր ։

Այն միջոց սարի կողէն չորս հարիւր գլխաւոր Մեղրացի ապստամբք ձայն տալով մեր վըրայ դիմեցին , որոնք 'ի բացուստ անոնք կը հայհոյէին , մահ կը սպառնային , և գայլի պէս վերէն վայրը կը վազէին · խեղճ անզէն հայերը սուրի բերնէ անցնել և նոցա ինչք կողոպտել ։

Իրդ երբ հայերը տեսան որ չ՚է կարելի առանց արեան ճապաղեաց այն մատալուս վտանգէն զերծանիլ և ազատ մնալ , որոշեցին 'ի նոյն արիութեամբ մեռնիլ , քան թէ վատութեամբ մատնել գլխերնին այնպիսի չար Գազանաց · զոր 'ի վաղուց անոնք քաջ գիտէին , և որոց անգըթութեան չ՚էին ինչ անտեղեակ ։

Ուստի թէ արք և թէ կանայք մէկէն դուրս ճեղան ուղին և փո՛յթ տալով ձորէն անդին բարաբերձ բլրոյ մը գագաթն ելան , կանայք և մանկտիք զմէջին կայան դնեցին , և արքը զանոնք իբրև ամուր պարիսպ չուրջ փակելով սկսան Մեղրայ դէմ դնել , և քաջութեամբ կռուիլ անոնց հետ 'ի նմին տեղւոյն ։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Նախէն տաճկաց , մեր քաջ հայոց չորս կողմէն ձգած քարանց ահեղ հնդիւնը բլուրն զայն ամրութեան 'ի թունդ կը հանէր. կանայք քարը կը կրէին , և արք զմէգս պարսիկք սաստիկ կը կոծէին ։

Մեդաց գլխաւորքը ատրպատկայ հովիտին ծոցը տապաստ անկած արեան մէջ կը լողային , ոմանց գլուխը , ոմանց թևը , և ոմանց սրունք կտրած գետին ինկած կը թրթռային կարթակալ ձկանց նման ։

Իսկ Մեդաց ձգած գնտակներ կարկտի նըման մեր բրգաձև խմբին մէջը կը տեղային , սիրտս կը տրոփի յիշել այն ահաւոր ժամ , յորում հայերէն ոմանք գնդակի հարուած կրելով 'ի կուրծ և 'ի կուշտ յարտեան բլրոյն անկած յարեան կ'ողողէին ։

Երեք ժամ տևեց այս դառն Մարտը հունէքին Հայքը տարան զյաղթանակ , քանզի այս հեղը քաջ հայեր թէ՝ արք և թէ՝ կանայք մեր կեցած բլրոյն գլուխէն յորդ հեղեղի պէս վայր հեղան , և միաբան ձայն բարձին ։

Հա՞ փախան հա՛, թո՛ղ մի՛ տայք , պաշարեցէ՛ք , շուրջ փակէ՛ք , տապալէ՛ք . մի՛ խնայէք , մէջ առէ՛ք , հա՞ մէջ առէ՛ք , սուր գերանդեաւ բրդէ՛ք գետինը թաղէք ։

Հայեր իրենց սուրերը փայլակի նման կը

խաղցնէին , և արեան հեղեղը հալւոյ ծոցէն ցեռօրէն կը խաղար ։ Ահա չորս դարեր կ'անցնին հազիւ թէ բաղդը կ'օգնէ հայոց . Մասիս իրեն տրտմութեան քօղը վեր կ'առնու ,՚ իր ակնարկ դէպ 'ի Հզօրաց կիրճը դարձնելով՝ Հայ նահատակաց քաջութիւնը կը տեսնայ , և 'ի ժըպիտ դէմս կը ցնծայ ։

Այս առաջին անգամն էր որ Մեղացիքը Հայոց քաջութեան փորձը առին . անձն որ 'ի նոցանէ զէնընկէց լինելով յետս ընդ կրունկն կը փախչէր հայեր զհետ նոցին մտած սաստիկ սրտմտութեամբ կը կոտորէին զանոնք անխնայ ։

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Մեղացիք ցիր ու ցան եղան , մենք բլրոյն գագաթէն վայր իջանք , ուր Մեղաց գլուխը կորած ձորի մէջ Ուռի ծառերի տակ ձգած տեղի , որոց վզէն թուխ արիւն վազելով հայոց սուրբ հողը կը պղծէր , դեռ արեան ջերմ շոգիք բա՛լ բա՛լ վեր կ'ելնէին ։

Անցանք փոքր ինչ առաջ Սիրուն անուն Հայ մ'ալ սիրտ քարի մը թիկնած արեան մէջ կը ծփար և կը մռնչէր ։

Ա՜հ , ա՜հ սիրտս կ'այրի հասէք ինձ . . . աչքերս մթնեց . . . Արեւը մտաւ . . . ա՜հ , ա՜հ . . . ։

Մեղաց ետեւէն պնդող քաջ հայերը այս սարի գլուխէն այն ձորի միջէն դուրս ելան , և

կրկին մէկ տեղը գալով փող ընդ փայթ մեց դըր-կոչում լայնութեամբ խոր հոր մը փորեցին , և Հայ Նահապետաց մարմինք իրենց արնոտ շորերով այն տեղը ամփոփեցին 'ի հող փոսին , և 'ի սուգ տրտմութեան ճամբայ ելան :

Միւսեան կ'ողբային և կոծելով իրենց հերքը կը ճողէին կ'լային կ'մաղկոտային և կ'ըսէին :

Ա՛հ , երանի՛ թէ մեր տեղը մնայինք , թո՛ղ սալը զմեզ մէկ հեղ կոտորէր , և ո՛չ թէ այսպէս անմարդի սարերին գլուխը գալով անգութ Մեդաց ազգը մեզի .հետ 'ի դէն և 'ի սուր մատոր մէկէր , Ա՛հ անիծեալ նոքա որք զկացան Հայ ազգին 'ի գործ դնել զՄուր և զՄուրն ընդ դէմ անխիղճ թշնամեաց , որք 'ի դէպ ժամու սպասեն հեղուլ զարիւն անմեղին :

Արդ հայոց կողմէն անհատ Նահապետաց թիւը ընդ ամէն հարիւր լինն հոգի էին թէ՝ այր թէ՝ կին թէ՝ տղայ և թէ՝ աղջիկը . այլ Մեդաց ազգէն 400 էն յիսունը չորս հոգիքը մազապուր զերծան , իսկ մնացորդքը ընդ ամէն 'ի նոյին տեղւոջ 'ի սէր . . . զոհ եղան , և Հուրեաց գիրկը փոխվեցան :

## ԳԼՈՒԽ Ի.

Արեւը մայր մտաւ , ձորէն դուրս ելանք ,
Մասեաց սարի ձիւնապատ գագաթն երեւաց .
քաջ հայերը սիրտ առին և հոգի , մէկ միւսին
մատով ցոյց կուտար . և ձայն բարձին միասին :

Ահա՛, ահա՛ երևայ Մասի՛սն ազատեցա՛նք , ազատեցա՛նք Ջրհեղեղէն և արեան հեղեղէն , և սիրոյ ու խնդութեան արտասուքը Նոյա աչքերէն ցօղեցին :

## ԳԱՂԹԱԿԱՆՔ

« Սի՛ս Սի՛ս ա՛ռ գլխ ,
« Սի՛ս Սի՛ս ա՛ռ գլխ ,
« Ն՛րթ առ Մասխն ,
« Բարձր է քան գլխ » :

Մինչեւ Կողբ գիւղի ներքև Արաքս գետի եզր հասանք , և գիտէր այն տեղը միայնք , մեզմէ քանի մը մարդ Շարայի գիւղը գնացին մեր գաղթականաց բնակութեան տեղը ճարել , որ զան հետզհետէ տասն տասն տուն ջոկեն և տանեն այն տեղերը դնեն :

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Արևն հարաւ Հայուհիքը Արաքս գետի եզրը սկսան ջուր տաքցնել իրենց վերքեր և արնոտ հանդերձները լուանալ ու ողբը (8) տալ :

Անկրաճի ժողն էր Շարայ գնացող մարդիկը խուռն բազմութեամբ տեղայի Հայոց եկան , որոնք երբ զմեզ տեսին սիրոյ և գթութեան արտասուքը ցօղեցին իրենց աչքերէն գրկախառն համբուրելու :

Այս օր եկաւ տասն տասն տուն մեր գաղ-

ճամբաներէն սկսան ջոկվիլ և մօտակայ գիւղերն երթալ Ռուսոյ Նահանգական Տէաչին տնօրէ-նութեան համեմատ ։

Մենք ալ Արմաւրայ աւերակին մօտ հիւսի-սային կողմն Շրէգ բլրոյն տակը Տարպանք անուն գիւղը գնացինք, և հինգ ամիս այն տեղը մը-նացինք ։

Տեղացի հայերը զմեզ շատ կը պատուէին, որդէն հիւրասիրութիւնն ալ Հայ ազգի բնական յատկութիւնն է, զոր քաջ գիտեն ամէն Ան-ցորդք ։

Այն բարեխէր ժողովրդոց համակրութիւնն ու աչքը խաղաղ ջնջեց մեր սրտէն ու մաքէն այն աղէտալի վիշտը և Սօլի տագնապը, զոր քանի մը ամիս յառաջ կրեցինք ։

Այն միջոց երեւելի դէպք մ'ալ (1) պատա-հեցաւ, զոր մտադիր ենք առանձին Տետրակաւ մը 'ի լոյս ընծայել, եթէ միջոց օգնէ մեզ խըղ-ճի անդորրութիւնը գտնել ։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Արդ երբ ամառն եկաւ, Տարպան գիւղէն ելանք, և գեղամայ Հարեաց Ջոր անուն գիւղը գնացինք. մեր աշխարհէն դաղթող ժողովրդեան մեծ մասը այն տեղը հասած կը բնակէր, որոց-մէն կարող չ'եղանք պահիլ, քանզի « Ամէն թռչունք իր երամին հետ կը չրջի » կ'ըսէ առած մը ։

Աշնան ժամանակը հայրս Երևանդ քաղաքը գնաց մեզի հացի հանդերձը առնելու , ամիս մը այն տեղը ուշացաւ չ'եկաւ ։

Մայրս յղի էր , իր որդեծնութեան օրերը հասած էին ․ օր մը երեկոյին մորս հետ միայն էինք մեր տան մէջը ։ Մայրս վառ ճրագի դէմ կանգնած թելը կ'ոլորէր չի'թ չի'թ քրտունքը անոր ճակատէն հոսելով վար կը թափէին , և ինքը նետահար թռչունի նման կը հեծէր և մերթ կը հառաչէր ցաւօք սրտի ։

Ասացի , մա'մի ինչի՞ կը նեղվիս ։

Ասաց ․ հիւա'նդ եմ զա'ւա'կս ։

Ինչի՞ հիւանդ ես ,

Քանզի սիրտս կը ցաւի ․

Թո'ղ սիրտդ չ'ցաւի ․ ․ ․ և լացի ։

Է՛ ա'ղէկ չի ցաւիր ձայնդ կտրէ զաւակս ; բայց հիւանդ չ'ըլլալը ո'չ թէ իմ՝ այլ Աստուծոյ ձեռքին մէջն է , որ կ'իշխէ մահու և կենաց ։

Ի՞նչ է Աստուած ․

ԳԵՐԱԳՈՅՆ ԷՈՒԹԻՒՆ մը կայ՝ Արարիչ ամենայն էից , Այն իսկ է ամենակալ Աստուած ․ որ 'ի քաղցր ախնարկս կը նախախնամէ զբնութիւն 'ի յաւիտենից անտի ։

Ո՞վ մեզի կ'իշխէ ,

Նոյն ինքն Աստուած որու քաղցր խնամոյ ներքեւ կ'ապրինք ․ գթած է նա ․ որոյ փառքը կը փայլենք ։

Ուրեմն Աստուածը թո'ղ գթա' և գթայ՝ պահէ ․

Հապա՛ պատմէ ինծի Աստուած, որ զիս ողջ պահէ, ես ալ զքեզ պահեմ, մեծցնեմ. ա՛խ երանի՛ այն աւուր որ իմ աչքը քու . . . տեսնար. երանի՛ թէ տեսնէի, թո՛ղ ետք գերեզմանը մտնէի, ո՞ւր է այն օրը. Աստուած զիմ ալիսի տեսնամ :

Նանի՞ եթէ հիւանդ ըլնիս ինչ կ՚ըլնի :

Չէրի՛ք որդի, հերի՛ք, արևիդ մատաղ հայրդ չ՚եկաւ հիւանդ եմ . . . կը վախնամ թէ . . . մեռնիմ . . . ո՞հ քու օրերը սուգ կը դառնան, ո՞վ զքեզ ալսափ պահէ, դեռ մատղաշ ես, ո՞հ մէկէն արևդ կը մարայ . . . և այս խօսքերուն հետ մէկ անգը յորդ արտասուքը անոր աչքերէն դուրս հոսեցին :

Է՛ նանի՞ մի՛ վախնար, եթէ դու հիւանդանաս և մեռնիս, ես ալ քեզի հետ կը մեռնիմ երբ իմ հայր գայ տեսնայ որ մենք մեռած ենք, 'ի հարկէ ինքն ալ կը մեռնի և գայ մեզի հասնի, մէկ անգը Աստուծոյ մօտ կ'երթանք :

Ասաց աղէ՛կ կը խօսիս զաւա՛կս, և ժպիտ մը անոր երեսի վրայէն վազեց . . . բայց Աստուած մի՛ արասցէ որ հիմակ մեռնինք միասին, Աստուած տայ ողջ մնանք, բարիքը գործենք, և զինքը օրհնենք, ո՛վ իր մեռնիլը կ'ուզէ. « Աստուածը մարդս ապրելու և բարիք մը գործելու համար ստեղծեր է » :

Հա՛պա ինչի՞ մարդը կը մեռնի :

Մարդուս մա՛հ՝ ինչպէս որ կեանքն ալ աստուծոյ արդար վճիռն է . « մարդ որ կայ ափ

մը հող է, և հողը պիտի դառնայ ։ Քանզի բը-նութիւնը շարժման մէջ է ։

Բայց վա՜յ այն մարդուն՝ որ դեռ լոյս չ'տե-սած, առանց բարիք մը գործելու կը մեռնի ։

Մարդիկ պէտք է մեռնին․ բայց պէտք է նախ իրենց բնութեան պէտքը լցնեն․ իրենց անձին սուրբ պարտքը կատարեն․ զոր ինչ եր-կինք վճռեցին, և ետք մեռնին ։

Կարի թշուառ է այն անձը, որ բնութեան կարգէն դուրս, վայրենի կեանք մը վարէ, նա-պանկեալ երևակայութեամբ 'ի մեղս կը մեռնի, ո՜չ ապաքէն Աստուած խղճին անդորրութեան մէջն է, և ո՛չ թէ խաւար խրճթին․ ․ ․ ․ ։

Արդ՝ ի՞նչ կը մնայ այնպիսւոյն․ — ոչ ինչ — մի միայն հողափուլ տապան մը․ որ Արևին լոյսէն խաւար դրկուած է ։ Ո՞վ կը յիշէ նորա ա-նունը․ — ոչ ոք․ — կը մեռնի ինքն և իր անունը իրեն հետ․ նորա էութիւն և չէութիւն մի նը-շանակութիւն ունին ։

Աստուած կուզէ մարդիկ մեռնի՞ն թէ՞ ապրի՞ն ։

Աստուածը կուզէ՝ որ մարդիկը բարի ապ-րին․ և բարի մեռնին․ բարի է այն կեանքը, որոյ մէջ սէր և անմեղութիւն միայն կայ․ բարի է այն կեանքը՝ երբ բարի հօր մը բարի որդիք կը յաջորդեն․ հայր թէ և կը մեռնի, այլ որդին անոր տեղը կը յաջորդէ․ այս կերպով մեռնիլը մահ չէ, այլ կեանքի նորոգութիւն ։

Բարի որդի մը ի՞նչ օգուտ կրնայ ընել ի-

րեն մեռած հօրն և մօրն :

Այդպէս մի խօսիր որդի որդս՛ • օգուտը ինքնին յայտնի է : Հայրը մեռա՞ւ • բարի որդի՛ն հօր տե՛ղը յաջորդե՞ց • ասել է մահ չը կայ • (այլ կենդանի յաջորդութիւն) և ահա՛ այս իսկ անմահութիւն է :

Քանզի բարի որդին վառ ճրագ է , իրեն հօր տան աշտանակին վրան դրուած , որ իրեն Ազգին և ընտանեաց լոյս կուտայ , որ իրեն դուռը աղքատին դիմաց կը բանայ , և պայն իր սուրբ քրտամբը վաստկած հացով կը կերակրէ , որ իրեն բարի վարքով , խոհեմ հանճարով , և անդին արեամբ , իրեն Ազգին փառքը կը վսեմացընէ • հաւանիմ որ և իր ազնիւ անձին ներկայութեամբ իրեն մեռած հօր և մօր յիշատակը Աստուծոյ և մարդկութեան առաջ անեղծ կը պահէ • « քանզի պսակ հարց որդիք որդւոց » :

Հապա ինչի՞ կը մեռնիս • ուրեմն ողջ մնացի՛ր, որ մէկ տեղը ապրինք , և բարիք գործենք :

Ազէ՛կ որդի՝ է՞ գնա՛ մեր Դրացի Պառաւկինը կանչէ , որ գայ գիշերս մեզի մօտ քնանայ , և զիս հսկէ • Թմրութիւն մը պատեր է իմ անձը , դողը զիս բռնած է : կը տագնապիմ ես :

Գնացի ես • և մեր Դրացի Արծուն կինը կանչեցի • եկաւ • մայրս մեր տեղերը սփռեց • ես մօրս ծոցը մտայ • դէմքս Նորա գոգ առեանց մէջ Թաղեցի • Արծուին ալ իր տեղ մնաց , ճրագը մարեցինք , և 'ի քուն մտանք :

Լուսուն դէմ քնից արթնցայ , աչքս բացի տեսայ , որ վառ ճրագը աշտանակին վրայ դըրված՝ կը վառէր :

Արծունը մօրս գլխի վերեւը նստած , անոր ճակատը կը շփէր , և կը մխիթարէր զայն ասելով : — Նայէ մի՛ վախնա՛ր Աստուծով ազատեցար:

Իսկ խեղճ մայրս յուզեալ սրտիւ կը մըռնչէր , և երբեմն կ՚աղաղակէր : Արդե՞օք Յակոբ պիտի գայ հասնի ինծի , որ զինքը տեսնամ ․ յետոյ մեռնիմ ․ ա՜խ ո՞ւր է մեր մարդը չ՚եկաւ . . . : Արծուն , ըսաւ , կանչէ իմ անուշ Ապահը , քնից հա՛ն , թո՛ղ ինձ մօտ գայ , զինքը տեսնամ , իր աչերը համբուրեմ , ես կը մեռնիմ , ալ յոյսը չ՚կայ , որ ես ողջ մնամ , պիտի մեռնիմ , ա՜խ պիտի մեռնիմ :

Ապա՜հ եղբ՛ր մայրդ զքեզ կը կանչէ որդի , — ըսաւ Արծունը :

Ցեղէս ելայ , և լալով գնացի մօրս գիրկն անկայ :

Ի՞նչ է նա՛նի , ի՞նչ է եղեր քեզի , ասացի :

Ասաց — ձայնդ կտրէ մատա՛ղ եղնիմ արեւիդ ․ Ապա՜հ , ձայնդ կտրէ ․ — աչերս համբուրեց ․ և զիս իր գիրկն առնելով բարձին ողնեցաւ :

Կրկին քունը զիս տարեր էր , ես քնացեր էի ․ Արեւն ելեր էր , մօրս ցաւը փոքր ինչ թեթեւցած կ՚երեւէր ․ երախայի մը սուր ձայնը ականջս անկաւ , մէկէն քնից սթափեցայ , և տեսնելով որ մօրս աջ կողմը փոքրիկ փաթեթ մը կայ :

Ասացի նանի՛ ո՞վ է այն ։

Արեւի՜դ մատա՛ղ քեզ քոյր մը եղաւ ։

Այս խօսքը երբ լսեցի, սիրտս անսպառելի խնդութեամբ մը լցաւ. ուրախութիւն մը զգացի, զոր լեզուք մարդկան կարող չ՚են թարգմանել. ուրախութիւն մը կ՚զգայի, որ յետ սակաւուց ՚ի սուգ, եւ ՚ի տրտմութիւն ոգւոյ պիտի փոխուէր ։

Ասացի, նանի՛, թո՛ղ որ գրկեմ իմ քոյրը, նանի՛ թո՛ղ որ համբուրեմ զայն, թո՛ղ որ իմ անուշ քոյրը գիրկս առնեմ։

Ասաց, համբերէ՛ զաւակս, համբերէ, թո՛ղ բարով հայրդ գայ. քոյրդ ժամ կը տանի. Երեցը զայն կը մկրտէ, կը սրբուի, կնքահայրը հօրդ հետ կ՚առնեն քոյրդ տունը կը բերեն, եւ դու գրկէ զայն եւ համբուրէ, որքան որ կը սիրես. «Ձեր սէրը սո՛ւրբ է» ։

Ինչի՞ իմ քոյրը հիմակ սուրբ չէ ։

Զաւա՛կս, սուրբ է, Աստուածը զայն սրբեց, բայց երբ Երէցը զայն մկրտէ, եւ ման տայ, Քրիստոսի անբիծ արիւնն ալ քրօջդ սիրտ ու միտքն սրբելով՝ անոր հոգին Աստուծոյ սիրով կը բորբոքէ, քոյրդ մէկէն լոյս կ՚եղնի. եւ լուսոյ որդի ։

Նանի՛, ուրեմն երթամ ճամբուն վրայ նայիմ, տեսնամ, հայրս եկա՞ւ թէ ո՛չ ։

Աղէ՛կ արեւի՛դ մատաղ, գնա՛ նայէ՛ տե՛ս թէ հայրդ եկա՞ւ, եւ շու՛տ արի՛ այն տեղը շատ մի՛ մնար ։

Գնացի ես ձորի ճամբուն վրայ նստայ մինչ 'ի կէսօրը, հօրս սպասեցի, չ'եկաւ, լալով տունը դարձայ. Մայրս ձեռքէս բռնեց՝ նստեցուց զիս, և հացը առջևս դրեց ուտելու. յաճախ երեսս կը համբուրէր և զիս մխիթարելով կ'ըսէր. — Մի՛ լար, զաւա՛կս, մի՛ լար, հացը կե՛ր, Աստուծով հայրդ վաղը կուգայ :

Մեր դրացի Հայ կանայքը՝ հողէ անօթները մէջ կերակուր լցած՝ իրենց թևի տակն առած՝ մօրս «աչքդ լո՛յս» կուգային, և մէկ մէկ ժամ մօրս անկողնոյն մօտ նստելով, կը մխիթարէին զայն, և կ'ելնէին կերթային «Օտարին սփոփանքը հոգածու սրտին օգուտ չ'են» :

Հայրս ուշացաւ չ'եկաւ. ութ օրէն ետք մայրս իմ քոյրը մկրտել տուաւ. ինքը ոտքի վըրայ ելած տան մէջը կը շրջէր, և միշտ հառաչելով կը մռմռէր :

Երեք օրէն ետք կրկին ցաւը մօրս վրայ ծանրացաւ, և անյուշ զայն անկողին ձգեց :

Մատաղ քոյրս նորա անկողնոյն մէկ կողմը անկած կը ճչա՛ր, ես ալ միւս կողմն նստած կուլայի. ո՛չ մեզի հացը կտրող կար, և ո՛չ ջուր բերող, ո՛չ մօրս դեղ և դուր ընող կար, և ո՛չ մեր ձայն կարող. կը լայինք մենք, ո՛հ, և մեր մօր ցաւը հետզհետէ կ'աւելնար :

Արևն առեր էր, յանկարծ հայրս մեր տան դուռը բացեց և ներսը մտաւ : Մայրս դրան ձայնը առնելով բնական զգացողութեամբ մը սուր ձայնով գոչեց : — Յակո՛բ եկա՞ր, մա՛րդ

ի՞նչ եղաւ քեզ , ալ չ՚ես գար ։ Ահա ես կը մեռ-նիմ . ա՛խ տեսա՞յ զքեզ ալ թո՛ղ մեռնիմ ։ Աստուած իմ , իմ սրտի անմեղութեան նայեցիր . ո՞վ գո՛հ եմ զքէն . ո՞րքան գթած ես , սիրոյ և որբութեան Աստուած ։

Հայրս մօրս անկողնոյն մօտ ծունկի վրայ գալով ըսաց . — Աստուածը բարին յաջողէ , ի՞նչ եղեր է կի՛ն , ի՞նչ եղեր է , ա՛խ իմ հոգին եղնա՛յ ։ Ես ալ ուրախութենէ կը լայի , և հօրս ձիտը կը գրկէի ։

Հայրս գործակալից սիրով մը երեսներս համբուրեց , և ըսաց ինծ . — Ձայնդ կտրէ՛ ձագուկս , ձայնդ կտրէ՛ , տեսնանք մայրդ ի՞նչ եղեր է . և աչքերը արտասուօք լցուած դառնալով դէպ 'ի մայրս ըսաւ . — Ի՞նչ եղաւ քեզ կի՛ն , ՚ի սէր Աստուծոյ ի՞նչ եղաւ ։

Մօրս չրթունքը կապա՛ծ , ապուշ կերպով մը հօրս երեսը կը նայէր , և խօսք մը անգամ անոր բերնէն դուրս չ՚էր ելներ ։

Հայրս լալով ըսաց մօրս . — սիրա՞ն կուզե՞ս գլուխդ գիրկս առնեմ , ինծի թիկնիր . իցէ՞ թէ փոքր ինչ հանգչիս ։

Մայրս սուր ակնարկ մը հօրս վրայ ձգելով հաճութեան սրտի յայտնեց , որով հայրս անոր գլուխը բարձէն վեր առնելով մօրս թիկունքը գրկեց և նստաւ , իր երեսը անոր ճակտին դընելով ։

Հայրս կուլար , և իր աչքերէն գի՛լ գի՛լ արտասուքը մօրս երեսին վրայ կը կաթէին , և

մօրս երեսէն ճի՛ւղ ճի՛ւղ վազելով իրեն ծոցը կ'անհետէին . . . ։

Ո՛հ որքան ցաւալի է այսպիսի բաժանում մը՝ երբ երկու անմեղ չծաղկած սրտին մէջ ամուսնութեան սուրբ սիրոյ մի և նոյն զգացումը կը մշտնջենաւորէ ։

Հետզհետէ թմրութիւն մը մօրս տիրեց . իր վարդագեղ այտերը կը թառամէին , և ինքը արմատէն կտրած ծաղկի պէս գունաթափ կը լինէր , դեղնութիւն մը անոր դիմաց վրայ եկաւ , և ինքն սկսաւ հառաչել ։

Հայրս որ թմրա՛ծ անթարթ աչօք մօրս երեսը կը նայէր , յարտասուս վղձկեալ գոչեց , — Ա՜հ ի՞նչ եղաւ քեզ , 'ի սէր Աստուծոյ ի՞նչ կը լինիս ։ Ո՛վ Տէր ե՛ս մեղայ ե՛ս . թող քու բարի կամքն եղնի ։

Մայրս հատկեալ ձայնով մը գոչեց . — Մա՛րդ. ես կը մեռնիմ , ալ յոյս չ'կայ . ինձ մի՛ մօնալ . . . ։

Ասաց հայրս . — Հապա դիս ո՞ւր կը թողուս , որդե՞րդ որուն կը թողուս . և երկու ձեռօք սկսաւ իրեն գլխուն զարնել ու գոչել . . ։

Մօրս աչքերէն երկու կաթ արտասուք վազեցին . մէկ մը հօրս երեսը նայեց , մէկ մ'ալ երկինք , և յուզեալ սրտի մը այս երկու խօսքը արտասանեց . — Մա՞րդ ես ի՞նչ ընեմ , Աստուծոյ կամքն է . . . ։ Եւ երեսը դէպ 'ի ինծի դարձնելով ձեռքը սրտիս վրայ դրեց . Ա՛խ իմ անուշ զաւակ . . . ըսաւ և իր հոգին աւանդեց ։

Հայրս ուշիկ մը մօրս գլուխը բարձին վրայ դրեց , տեղէն վեր ելաւ , իրեն ոտքերը դողալ սկսեցին , ինքը գլուխ վեր վերցուց եւ գոչե՜ց .
—Աստուա՜ծ իմ հոգին ա՛ռ , ի՛մ հոգին . Աստուա՜ծ իմ հոգին ա՛ռ , ալ ինծի օր և Արև տեսնալ պէտք չ՚է . ա՛խ իմ աչաց լո՛յսը քաղվեցաւ , ալ իմ կեանքն ի՞նչ է :

Ահա՛ իմ կեանքս մեռաւ , իմ հոգին ալ հետ . մեռնի՛մ , ես ալ , մեռնի՛մ , թող մահը զիս չ՚բաժնէ . «Սիրոյ մէջն է անմահութիւնը» . . . :

Հայրս երկու ձեռօք իր գլուխն և ծնկներուն զարնելով ուշաթափ երեսի վրայ գետին ինկաւ :

Տխուր լռութիւն մը մեր փոքրիկ Տնակինը տիրեց . ո՜հ որ այնուհետև հառաչանաց , և վըշտալի հեծութեան մը լարանի կը փոխվէր :

Մէկ ժամէն ետք՝ մեր Դրացիք մօրս մահուան լուրը առին եկան , մայրս լուացին , սպիտակ կտաւով պատեցին . Երէց կարգը կատարեց , Նորա մարմինը դագաղին մէջ դնելով իրենց թևերու վրայ առին , և խուռն բազմութեամբ տարան Հուրեայ ձորի Արևմտեան կողմին գերեզմանատուն ՚ի հողը ամփոփեցին . . :
Դեռ հայրս ուշաթափ ինկած էր գետին :

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Արծունը մատաղ քոյրս տարեր էր ծիծ ստա-

լու․ ես և հայրս միայն մնացեր էինք մեր փոքրիկ Տնակին մէջ, որու պատ ու առիքը [illegible] և տրտմութիւնը պղեցած էին ։

Հայրս ո՛չ կարող էր հաց ուտե՛լ և ո՛չ ջուր խմել, միշտ զիս գիրկն առած, իր երեսը իմ երեսին դրած կուլար ու կը մաղկտար, և մրմու- արցունքը իր աչքերէն կը թափէր ։

Ցուզեալ սրտիւ կ'ողբար ու կը գոչէր . — Ապա՜հ ո՞ւր է մայրդ, ա՛խ ես զքեզ ո՞ւր տանիմ, ա՛խ ես ի՞նչ ընեմ, ի՞նչ սև սուգ եկաւ մեր գլխուն . . . ։

Ապա՜հ ելի՛ր զքեզ տանիմ մօրդ մօտ, ելի՛ր երթանք մօրդ տապանը, գուցէ մայրդ ելնայ զմեզ իրեն հետ տանի ։ Հերի՛ք մինակ այս տեղը մնանք ձագո՛ւկս, հերի՛ք ։ Ելի՛ր երթանք, մայրդ զթոտ է, տապանէն դուրս կ'ելնայ, զմեզ իրեն հետ կ'առնէ կ'երթայ ։

Ապա՜հ մայրդ զքեզ տեսնայ ու չ'գթա՞յ, կարելի՛ չէ՛ ։ ի՞նչ սխալ ունի ինծի, որ զիս իրեն հետ չ'տանի ։ Մի՛թէ ես օր մը անոր սիրտը կոտրեցի՞, չէ՛, չէ՛ ։

Երկինքը գիտէ թէ՝ ես մօրդ հետ ի՛նչ կերպ-սիրով էի . այլ չ'գիտեմ թէ՝ իմ մեղքն ի՞նչ էր, որ Արևը զիս խեթիւ եհար . իմ սիրոյ հետ երբ խառնեց, իմ կեանքը խլեց, կիսատրիու հոգի ծոցն իջուց, և զիս փշտահար այսպէս երեսի վրայ թողուց ։

Ա՛խ Ապա՜հ որդի՛, լաւ է ինձ մեռնիլ քան թէ աւելի եւս ապրիլ, և լոյս Արևը տեսնալ ։

Եղի՛ր երթանք, անշուշտ պէտք է մեռնինք և [illegible] տեսնանք. այլ է..

Չերթա՛նք մնանք, այլ կեանք մեզի պէտք չ'է ։ Մայրդ գնայ, և մենք այս տեղ մինակ մնա՞նք. ինչ է մեր կեանքը՞. Եղի՛ր երթա՛նք ծագո՛ւկս, եղի՛ր երթա՛նք, հիմակ մայրդ ալ կ'ուլայ և մեզի կ'սպասէ թէ՞ ինչ եղաւ՞, որ ուշացան չ'եկան ։

Եղի՛ր ծագո՛ւկս, այս տեղը ալ մեզի բան մը չ'մնաց, եղի՛ր. չե՞ս տեսներ մօրդ սիրտը հիմա արեան ծով կտրած է, չե՞ս տեսներ մօրդ աչքին խիղճը, հիմակ իրեն աչքերը պղտոր աղբիւր դարձեր են, քեզի կ'սպասէ. եղի՛ր երթա՛նք չը լինի թէ վշտանայ ։

Հայրս ձեռքս բռնեց, մեր տնակը ամայի թող տալով դուրս ելանք. և երբ գերեզմանոցին մօտ հասանք, հօրս ծունկերը դողացին. և ինքը դողալով երեսի վրայ գետին անկաւ ։

Անցա՛ն քանի մը վայրկեաններ, հայրս տեղէն վեր ելաւ, զիս իր գիրկն առաւ. քիչ մը առաջ գնացինք. երկու տապանաքարի մէջ տեղը գետնէն կանգնաչափ բարձր տապանի ձևով կիտած թթեղ մը փուլխ հողը երևաց. ։ Հայրս զայն տեսած միջոց. յուզեալ կերպիւ մը գոչեց ։

— Ա՛ռ քու սուրբ հողին մեռնիմ, որոյ գիրկը թաղուած կաս դու Միրան, ա՛ռ քու որդին. ահա՛ քեզ բերի. ա՛ռ գիրկդ, քեզի՞ հետ առ՛, չ'մնաս կարօտով ա՛խ ա՛խ ա՛խ . . ։

Ա՛ռ Միրան ա՛ռ, Ակա՛հն է, զոր գիշեր

ցորեկ գիրկդ առած՝ երեսը կը նայէիր, և չ'էիր յագենար, բա՛յց քու սիրոյ գիրկը. քու փափաքն ու կենաց պտուղը 'ի ծոցդ ամփոփէ. ա՛ռ ա՛ռ գոչեց Հայրս, և զիս իրեն գրկէն մօրս դեբալանին վրայ ձգեց:

Հայրս իրեն թևերը պարզած, մօրս ցուրտ Տապանը գրկեց. երեսնէն վրայ անկեր կը հեծէր կ'ողբար, և միմեանց արտասուօք մօրս շիրմին տամուկ հողը կը թանար: Մինչև ձեռօք մօրս տապանին կը զարնէր ու կը գոչէր. — Ելի՛ր ելի՛ր տես թէ ի՛նչ սուգ զմեզ պատեր է:

Ես ալ միւս կողմն մօրս տապանի հողին վրայ անկած կը ճճայի, կը լայի. չ'էի գիտեր թէ՝ մօրս մեռնիլը սուտ է. քանզի մեր Դրացիքը զիս խաբեր էին թէ՝ մայրդ գնացեր է Եկեղեցին. քիչ մը ետք պիտի գայ:

Հա՞յր, հա՞յր, ելի՛ր, զիս իմ մօրս տա՛ր. ո՞ւր է իմ մայր ելի՛ր, ելի՛ր կը գոչէի. և արտասուքը գետօրէն աչքերէս կը վազէին:

Այս աղէտից կարող չ'եղաւ դիմանալ հայրս, իւր սիրտը բեկաւ և լալով գոչե՛ց. — Հա՛ ձագուկս հա՛ գիտեմ որ կ'ուզես մօրդ երթալ. բայց ես զքեզ ո՞ւր տանիմ, ո՞ւր է մայրդ ասաց. — ահա՛ այս տեղն է մայրդ, և ափով հողը վերուց. իր գլխուն ցանեց:

Հայրս զիս գրկեց, ծունկերի վրայ եկած մօրս տապանին քով, սկսաւ ձայն տալ բեկեալ սրտիւ:

— Ելի՛ր ելի՛ր ա՛ռ ահա՛ կ'ուլայ Արա՛մն, զքեզ կուզէ. խեղճ տղան քնից նոր ելաւ. ե-

Ելի՛ր կի՛ն, ա՛ռ դու քու որդին. չէ՛ կը լսես ահա՛ կ'արտասուէ, և նանի՛ կը գոչէ։

Հայրս շատ մը ողբալէն ետք մօրս տապանը համբուրեց. այս խօսքերն ըսաւ. — «Սիրա՛ն մեռնողին ետև մարդ չ'մեռնիր» արդէն գիտես թէ՝ «Այս աշխարհ եկող մարդոց բաժին վիշտ և հեծութիւնն է. ո՞վ իր սիրոյ պտուղը վայելեց առանց արտասուաց» Սիրա՛ն սիրտդ ինծմէ չը մեռայ։ Ահա՛ ես կ'երթամ, և այն յոյսով, որ սիրոյ աշխարհին մէջ զքեզ նորէն պիտի տեսնամ։

## ԳԼՈՒԽ ԻԴ.

Հայրս իմ թևէն բռնեց և գոչեց. — Ելի՛ր ելի՛ր ձագուկս. Աստուծոյ կամքը ամենէն հզօր է.. ո՞վ գիտէ Աստուծոյ միտքը. զոր ինչ երկին վճռեց անմարթ է եղծանել. պէտք է սիրով տանինք ամէն փորձանաց, զի այս Աստուծոյ բարկութեան հողմն է, որ 'ի մեզ շնչեց։ Սիրա-մի՛տ եղի՛ր, քեզի պիտի գթայ նա. յոյսդ նորա վրայ դի՛ր, նա քեզի համար պիտի հոգայ իր քաղցր գթութեամբը։

Մայրս քանի մը օր առաջ՝ գլխոյս հերքը սանտրեր, երեք ճիւղը հիւսեր, ուսերուս վրայ ձգած էր. զոր հով քամին փչելով թիկանցս մէջ կը ծածանէր զայն՝ խառնելով իմ խարտեաշ հո-պոպեաց հետ։

Հայրս վաղակը իրեն մէջքէն հանեց, գըլ-խոյս փեղոյրը վերցուց, և իմ երեք հիւս հերքը

կոյրեց , մօրս տապանի հողը բրելով երկու ճիւղն այն տեղը թաղեց , և միւս ճիւղն ալ այն թեղօշ ծառի շիւղը կապեց , զոր մօրս տապանին գլուխը տնկած էր :

Հայրս երբ պաղ ջրով իմ գլուխ՝ և իր աչաց արտասուքը ու երեսը մօրս տապանի հողին վրայ լուաց , սուգէն ելաւ , ձեռքս բռնեց մեր ամայի տնակը դարձանք :

Արծունը ներս մտաւ լալով և ըսաւ հօրս · — Դու և Ազատ ո՛ղջ մնաք , աղջիկն ալ մեռաւ :

Հայրս իսկոյն ծունկի վրայ եկած գետինը համբուրեց և ասաց · — Գո՛հ եմ քեզմէ Աստուած իմ Աստուած իմ, որ ինծի խնայեցիր , թեթև առնել իմ նեղութեան բեռը · քեզի քու խնամոց կը յանձնեմ զիս Տէ՛ր · դու քու բարի կամաց համեմատ ինծի եղած պէտքը տնօրինէ · ես կարող չ'եմ գիտել իմ բարիքը · գո՛հ եմ քեզմէ ո՛վ անհուն Էութիւն · դու ես Աստուած իմ որ զիս կը խնամես :

Արծո՛ւն՝ գոչեց , հայրս · — Ասա՛ Երէցը · թո՛ղ մատաղ Աղջիկը նոյն տապանը իրեն մօրը ծոցը թաղէ : Շուտ թաղել տո՛ւր՝ արի՛ · ալ ինծի այս տեղը մնալու մխիթարութիւն մը չ'մնաց :

Հայրս այն օր ողորմութիւն բաժնեց , մօրս հոգւոյ համն ալ տուաւ · մեր տան մէջի եղած գոյքը թէ անկողինք և թէ՝ անօթներ Արծունին տուաւ · գիշեր մեր տունը մնացինք :

Հետևեալ օր՝ Արևն առաւ , հայրս ձին դուրս հանեց թամբեց , ձեռքս բռնեց՝ դուրս ելանք՝

մտան դուռը փակեց · այն տեղը որ մ'ալ ա-մայ · ձին հեծաւ , գիս գիրկն առաւ , ճամբայ ե-լանք ։

Մօրս գերեզմանի մօտէն անցած միջոց ձիէն վար իջանք · մօրս տապանին վրայ գնացինք , հայրս որբ մ'ալ անոր լալով , և երեք կուցը հողը մօրս տապանի հողէն առաւ , թաշկինակին մէջ լցեց , մեր պահեստին մէջը ծրարեց , և դառնալով դէպ 'ի մօրս գերեզմանը ըսաւ · — Սիրա՛ն ահա՛ կ'երթամ , և քու սիրոյ դրաւը հե-տըս կը տանիմ · Սիրա՛ն մնաս բարով · ես կ'եր-թամ այն անմահ յուսով , որ երկինքը զիրար տեսանք · · · ։

Հայրս ձին հեծաւ · գիս գիրկն առաւ , և դէպ 'ի մեր հայրենիքը դարձանք ։ Շիրակայ դաշտէն կ'անցնէինք · Անի քաղաքի փլած Աշ-տարակները հեռուէն երեցան · հօրս աչքերը արտասուօք լցուած ըսաւ ինձ ։ — Այսա՛հ ահա՛ այս Աւերակը Անի՛ն է , Անի՛ն ։ Ահա՛ այս ցցուած Աշտարակներ մեր Գիւղացին նախնեաց փշրուած փառքի բեկորներն են , որք դեռ կանգուն կը մնան ։ Ա՛հ Անի՛ Անի՛ , իմ Արև քեզ մատաղ լինի ։ Արդեօք 'պիտի գա՞յ 'օր ազատութեան Անի՛ , որ դու կապես կրկին թագ Ազատութեան'.

«Ազատութեան հողին Արիւնն է» ։

Քանի մը օր ալ ճանապարհորդութիւն ը-նելով հասինք Հարք գաւառը , Լիզ գիւղ · ուր մեր տունն է , և տեղի բնակութեան մերոց նախնեաց ։

Մեր գիւղ հասած միջոց հայրս մօրս գե֊րեզմանէն իրեն հետ բերած հողը տարաւ գե֊րեզմանոցը, մեր Նախնեաց դրից մէջ, որոշեալ տեղ մը բրեց , և զայն այն տեղը լցեց . քար մը օ֊ծել տուաւ այն տեղը կանգնեց , և կտակեց որ զինքը հոն թաղեն զկնի մահուան ։

Ներկայ էի հայրս մեռաւ 1853 ին Ապրիլ 19 աւագ Ուրբաթին , որոյ մարմինը տարանք այն կտակեալ տեղը մօրս հողին ծոցը թաղեցինք և նորա ցուրտ շիրմին վրայ կանգնեցինք մահար֊ձան մը , որոյ վերայ գրուած է այն պարզ տա֊պանագիրը ։

«Յայս Տապան ամփոփին
Ոսկերք լոկ և մարմին
Յակոբեայ որոյ հոգին
Դարձ 'ի գիրկն Անեղ Էին ։ »
Իմ կաթիլք բրանց
Յօղովք արտասուաց
Թացցեն զՁեր տապան
Է՛ Յակոբ Միրան ։

## (Ա) ՄՆԱՑՔ ԲԱՐԵԱՒ

1. Թիլթուրն եկաւ մեր Յանքը կերաւ ,
Մեր Արան ու ափը մոխիր դարձուց ,
Մնաք բարով Սարե՛ր Ձորե՛ր ։
2. Յորեն չ'եղաւ Գըգիլը կերանք ,
Մեր ուսած հացն աղու դարձաւ ,
Մնաք բարով Դարե՛ր Փաշտե՛ր ։
3. Ձմեռն եկաւ մեր դուռն առաւ ,

Մայրն իւր մանկան ձգեց փախաւ ,
Մնաք բարով Էրո՛ւնք Թռչո՛ւնք ։
4· Սո՛վն ալ եկաւ վրայ հասաւ ,
Իր սուրը մերկեց մեզի կարեց ,
Մնաք բարով Քաղե՛ր Թաղե՛ր ։
5· Մահը վազեց դունէն մտաւ ,
Հարսը փեսի գրկէն խլեց ,
Մնաք բարով Լուսի՛ն Աստղեր ։
6· Մեր սիրտը կտրաւ , Սէրը չ'մնաց ,
Մեր Հողն ու Ջուր սև օձը դարձաւ ,
Մնաս բարով բարի Արև ։

## (Բ) ՈՂԲ ՍԵՒՐ ՍԱՐԻ ԹՌՉՆՈՑՆ

1· Արե՛ղ մերկացի՛ր քու ոսկի Շալերը ,
Բա՛կ ա՛ռ սուրբ Լուսի՛ն , սուգ մտիր Երկի՛ն ;
Տեսէ՛ք Հայ Հուրիք կ'երթան կոծելով ։
2· Աստղե՛կ լոյս մի՛ տար , ելէ՛ք թուխ Ամպե՛ր ,
Շանթ ու կայծակ հարէ՛ք այս Երկիրը ,
Գառները գնացին , դեռ կ'ունան Գայլեր ։
3· Հողի՛ մի՛ հեւար , հիր եղիր է՛ Նիւթ ,
Վի՛ն աներեւոյթ խառէ խառէ ըղձնուս ,
Հայեր գաղթեցան , Մէգ հա՛ր զԱտրդան ։
4· Հարաւ մի՛ չնչեր , Հիւսիս մի՛ փչեր ,
Թո՛ղ Մշուշ պատէ Բիւրակնեան սարեր ,
Սէրը Հայու սիրտ կայ , թող սառկին օձերը ։
5· Նմրո՛ւտ ափերդ հա՛տ , Հուր եղի՛ր Հրանտ ,
Ցարիւն ողջէ՛ք Հոլի՛ս Անդ ու Գաշա ,
Հայերը խիղճ ունին , Հազարը Սուր ու Սանդ ։

Նազի՛կ, մի՛ նայեր, Ծովի՛կ մի՛ ծփար,
Մինչ թո՛ղ Սամն երթայ. դու 'ի նա Հօր հա՛յե
Սիրտ Հայուն սիրուն է, Աչքդ այլոց մի տար ։
7. Աշո՛ւն մեզ հասաւ, լքէ՛ք Ծիծառներ,
Թո՛ղ զՀայս աւեր կոչեն կոյր Բուերը,
Հոգին տայ Սո՛ւր, Սէ՛ր Տէրը չինեն Հայեր ։

## (Գ.) ՍՊԱՆԵԱԼ ՕՁՆ.

1. Սակա՛ւ և սարսի՛ր ո՛վ նախանձ Սատան,
Զի դու դեռ պահես Ոխոտ թշնամութեան.
Օձու Ձեր մտած հալխ հեղարար,
Զորդւոյն Նուայի՞ խայթել զԳարշապար ։
2. Հայն փառք զփորձն էառ, չ'անտալ Աստուծոյն,
Որ չրջի թաղուն ընդ լեզու իւր Թոյն,
Գխպաց սպառել խօցել անխնայ,
Ըզխոյն ախոյեան երբ անդէն գանայ ։
3. Զի՛նչ չա՛հ այն Թախանձ, ուր ոխրէ Նախանձ,
Ներել Թշնամւոյն մահու տալ զխելն անձը.
Թէ՛ և գեղեցիկ, թէ՛ և սիրունի,
Օձու հրապոյրը մեզ տանջլի է ։
4. Ա՛ մօ՛թ քեզ Սատա՛ն, ուժոյդ փորձն առե՞ր.
Հայն չ'ունի երկիւղ, թոյնէ չ'գիտեր,
Իւր մխոցը Սուր հատու իր սիրուն է վահան,
'ի մի զարկ չրջէ զթշնամին կործան ։
5. Տե՛ս քու չարութեան նուաղեալ Պատկե՛ր,
Որ Ծառէն կախված՝ կը թուէ զԱստղեր,
Հայն ո՛չ Բաղդ գիտէ, և ո՛չ Բժժանք,
Երբ Վրէժը լուծէ կը վարէ Ազատ Կեանք ։

Յ· Նա կ՚երդնում եթէ՝ Նւան Հայ լինէր ,
Օձը երբէ՛ք զայն կին խաբել կարօղ չ՚էր ,
Զը գիտէ Հայ Տիկին հավատ կեղծ ձայնը ,
Ի՞նչ չահ է Օձին բանալ իր պարզ Միտը :

## ՈՂԲ ՕՋԱՀԱՐ ՊԱՏԱՆԻՀՅՆ

1· Աշխեր գլուխը վարդ բուսած էր ,
Վարդի բոյլէն վիշապն ելաւ ,
Գլուխը տնկեց և սուր սուլեց ,
Սմբատը գետին փռեց փախաւ :
Աւա՛ղ Սմբատի Արևուն ,
Եւ Օ՛ր եկաւ իր Մօր գլխուն :

## ԳՈՎԵՍՏ ՄԹԽԱԼԻ

2· Մթխալը տեսաւ , վազեց հասաւ ․
Վեհ Արութեանց կրակը դարձաւ ․
Սպանեց վիշապը , Ծառէն կախեց ,
Եղջիւրքը հանեց , վրէժն առաւ :
Երնե՛կ Մթխա՛լ ըզքեզ Ոսկողին ,
Երնե՛կ քեզի ու քու տանողին :

## (Է)· ԵՐԳ· ԱՌ· ՀԱՅ ԹՌՉՈՒՆ

1· Երգեա՛ Սոխակ անուշիկ ,
՚Ի գիշերին պաղ զովարիկ ,
Որ յար առնուս ըզ դադար ,
՚Ի վայրս Հայոց գեղեցիկ :
2· Սոխա՛կ ըզ քեզ ընտանի ,
Խօսք քո առնեն Հայ Ազգի ,

Երգեա՛ 'ի սէր խանդ ու մանդ ,
Զհայ Ազգին հին Աւանդ ։
3. Երգեա՛ 'ի գով Հա՛յ Թռչուն ,
Հերի՛ք հեծես դու 'ի քուն ,
Արի պատմեա զԲաղդն Հայոց ,
Զի՞ զուր երթայ Յոյզ սահուն ։
4. Սոխա՛կ միայն դու կացեր ,
Հաւատարիմ Հայ Հողոյն ,
Որ ոչ տատի հեռացար ,
Եւ ոչ զբոյնդ փոխեցեր ։
5. Գիտեմ սիրե՛ս զՀայ Աշխարհ .
Յորմէ երբէք չ'եղեր տար ,
'Ի սէր Հայոց սուրբ Հողոյն ,
Ասա Ահա՛ ինձ զոր ինչ քուսար ։
6. Քան զի քո ձայն կենդանի ,
Ցիս արծարծէ նոր Հոգի ,
Զքաջութեան դարն Հայկեան
Բերէ մտացս յանդիման ։
7. Զի՞նչ յիշատակ Հնութեան ,
Հաւ քո պատմէր զՀայկեան ,
Զորոց փառաց ըզ Բամ-ին ,
Բիրք աչաց նորին տեսին ։

## ՍՈԽԱԿ

8. Զի՞նչ ինձ վարձ Հա՛յ պատանի .
Տաս , թէ՛ երգեմ զԴարն անկի .
Զոր իմ մեծ Հաւէն ուսայ ,
Ես 'ի մատաղ հասակի ։

## ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ

9· Հայոց ազնիւ Աշխարհին ,՝
Մարմանդք գետոց քեզ էլցին ,
Զօրովք Մրտին և Բարախին ,
Հուրան առնեն զովագին ։
10· Ընդ քեզ հիւսեա՛ զԲոյն Անուխ
Ընդ որ վճիռ Գետք հոսին
Զօրովք ունէչք Բուռեննեաց
'ի ճիւղ ճկուն զալարին ։
11· Ընդ խա՛ղ առնեն խայլ ձկունք ,
Որք լճանան մանր Առուք ,
Դու անդ կացցես ապահով ,
Որ փառի Վարդն 'ի Շաղ զով ։
12· Էառ Մոխախն զթել բանին ,
'ի ծոց լուին Գիշերին ,
Զնորին հեղիկ խօսից խանդ ,
Տեղայր 'ի մեջ հով Փամին ։

### ԵՐԳ Զ·

### ՍՈԽԱԿ

13· Միտ ա՛ռ է՛ Հայ Պատանի ,
Թռա՛ւ գնաց Դարն Ոսկի ,
Երբ Արամայ փառք Վառ ,
'ի զով Մասեաց հովահար ։
14· Արդե՞օք յիշեն Հայք զԱրամ,

Զոր քաջ գլխեն ձենք և Սամ,
Նա 'ի հանրաւ Քաջութեան
Եղ ըղձա՛ լուր յԱրեգական ։
15. Նմին չ՚եղեն գխմագրաւ ,
Ո՛չ Հիւսիս և ո՛չ Հարաւ ,
Ցոլից Արփւոյն մինչ 'ի Մուտս ,
Տիրէր նա բուռն բազկաւ ։
16. Նա հաստատուն Աղեղամբ ,
Նետ թոթափեաց շանթաւաք ,
Հար զՀուդ զԲուդ զՃկօտ ,
Ծոցեաւ արեան ելից զօդ ։
17. Նմին ուխտեն կամակար ,
Ազգ և Ազինք աշխարհի ,
Հայ ազգին լինել գերի ,
Հարկս հարկել ց՚բիր դար ։
18. Վկայ չէ՞ք Արե՛գ Լուսի՛ն ,
Աստղալից պատմէ Երկին ,
Զգործ քաջութեան Արամայ ,
Կնքեաց 'ի Կչիւն Հայկայ ։
19. Նոյն կարդա՛յ զի Հայ Անուն ,
Վե՞հ ծանիցի յաշխարհի ,
Հարկէ խօսիլ զՀայ Լեզուն ,
Խուժ և Դուժ Ազգաց երկրի ։
20. Ոսկի խնձոր յերկնից կախ ,
Լոյս մեծ առնէր Հայոց Տան ,
Եւ գետ Գինւոյ մշտախաղ ,
Բղխէր Աթոռն Անատան ։

## ԵՐԳ Է.

## ԳԱՂԹԱԿԱՆՔ

1. Արագս ե՞րբ եկար Բիւր Ական Սարէն ,
Արագս է՞ր վազես գաս մեր ետեւէն ,
Չերի՛ք զմեզ վարես Օտարին հողերը ,
Ի՞նչ կ'ուզես Արագս մեր սև Արևէն ,
Արագս զուլա՛լ քու պղտոր ալիքը
Ջու՛ր տու՛ր որ լուանք մեր արնոտ Ծաղիկը ։
2. Արագս է՞ր կ'ողբաս , ուղիղ է , կատակ ,
Ո՞վ ըղձեց եհար 'ի սո՛ւր 'ի սլաք ,
Արիւնով լցեց քու կուրծ կոկոնած ,
Արա՛գս մեզ պատմէ քու կենաց կատակ ,
Արագս զուլալ քու պղտոր Ալիքը ,
Ջու՛ր տու՛ր որ լուանք մեր արնոտ Վէրքերը ։

## ԱՐԱԳՍ

3. Ո՜հ իմ շունչ կորաւ հայլւ Ձեզ համայ ,
Թողէ՛ք ես ասեմ — խամուրայ եկայ ,
Գիտէ՞ք այս Գիշերը ի՞նչ սուգ կը պատեց .
Որ լալոտ աչքով Ձեր ետեւէն անկայ ,
Ինչի՞ զիս մինակ թողիք ու փախաք ,
Որին փոխեցիք զիմ Անմահ Վտակ ։
4. Հարաւ զիս մաղեց , Հիւսիս զիս թաղեց ,
Լուսին յԱմպ մտաւ զիմ սիրտ պղտորեց ,
Իմ գանգատը կապեմ ջրերու թեւերը ,
Թո՛ղ վերցուն տանին զլլան Գետեր ,
Թո՛ղ անցնին ջրեն այն արնոտ Դաշտեր ,
Ուր թաղին 'ի հող Հայ ազգի Քաջեր ։

Ե. Հոգին հրեղէնը տարաւ Հողեղէն,
իմ ոսկի խնձորը խլեց իմ ծոցէն,
իմ Սէրը կը թաղեմ Ծովերու խորերը,
թո՛ղ լեզու ելնեն անհեղ Ալիքները,
թո՛ղ ականջ դնեն աւազուտ Ափերը,
թո՛ղ լսեն ու լան սարերն ու ձորերը։
Զ. Արեգ վերացաւ՝ Երկին թագը կապեց,
Իր հոգին հալաւ Բիւր Ակունք կազմեց,
Թէ հուր հրդեհի զԲնութիւն այրէ.
Թո՛ղ հրեղէն Հեղեղը գլխ վերցու տանէ,
Թո՛ղ շարժին Աստեղք, թո՛ղ շնչեն Հողմեր,
Թո՛ղ լան և ողբան քարերն ու թփերը։
Է. Ո՞վ գիտէ, ո՞ր է Այն Անմահութեան,
Զոր Միտք մահացուաց զայն գտնել բաղձան,
Այն Անմահութեան և Բիւր բարութեան
Միայն ՎԵՀ ԷԱԿՆ էր Աստուածն Հայկեան.
Թո՛ղ թուեն Հիւղէք, թո՛ղ մաղեն Բնութիւնը,
Միշտ անմահ Հոգիքը Անեղ զէն կարդան։
Ը. Արեգ լաց մնաւ խորան ՆԱ ԷԻՆ,
կալաւ իր սալինքը. Սէ՛ր կարդաց հոգինը,
Հուր Սիրոյն ելաւ, Արեգն այրեցաւ,
Իր հոգին հալաւ Արագս դետն իջաւ,
Բիւր Ակունք եղան Արցունք իւր աչաց,
ԶԱճիւն ոսկերացն թափեցին յԱրածն։
Թ. Խոնարհի Երկին, շողայ Սէր ԷԻՆ.
Շնորհք բոլորեն զՏապան Արեգին.
Ոսկեփայլ Ամպերն քողեն զՍուր Սար,
Աղեղն հաշտութեան կապէ զիւր կամար,
Ընդ Երկին Երկիր թո՛ղ դրկեն զիրար,

Թո՛ղ համբոյր Սիրոյ տան Լոյսն ու խաւարը ։
10. Սէր էին հեւայ Արեգին Տապան ․
Հողին հրդեհէ զԱնթեղ բնութեան ․
Շող մաղէ զՀող, Հուր տեղայ Հրին
Հալէ զՀիւթ ու Նիւթ հրեղէն Քամին,
Արուտն ու Մօրուտն թո՛ղ զգեն հոսեն,
Նոր երկին երկիր թո՛ղ հալեն թափեն ։
11. Գարուն թէ հասնի, թէ բացուին Սարերը,
Թէ հարաւ շնչէ, թէ հալին ձները,
Թէ Տապ Արեւուն իջնայ 'ի հողերը,
Թո՛ղ Ըմուլ Երկիր լուծէ իր կապերը,
Թո՛ղ Սէրը անձրեւեն, թո՛ղ եղնան Ամպերը,
Թո՛ղ ծլին հողէն Հայկայ ոսկերները ։
12. Արագս ողբաց ա՛նց — Սիրդ ինձ ի՞նչ մնաց,
Ծղեց իր Շապիկը, իւր կուրծքն երեւաց ․
Իւր փաղփխնափայլ Ստինքն արնոտած,
Եւ Սուրն եւաբարդ նորա սիրտը փարած,
Տեսա՞ք ասաց լաց — Արագս լալագին,
Իւր պղտոր ալիքը յարխեն ծփացին ։

## ԲՈՂՈՔ

1. Ո՞վ Նախախնամող
Բնութեան Աստուած
Եթէ չ'ես 'ի քուն,
Լուր մեզ և հայեա՛ց ․
Հերի՛ք Տէր փորձես,
Հայք սիրեն զքեզ ։
2. Հայք աղէկտուր

Առ քեզ բողոքեն ,
'Ի բողոք արդար ,
Զքեզ իսկ ստիպեն ·
Հերի՛ք Տէ՛ր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
3· Հայք խօսին արձակ
Յանձն 'ի խիղճ վահ ,
Դատ մեր ընդ ո՞ է ,
Թո՛ղ Աստուած տեսցէ ;
Հերի՛ք Տէր փորձես ,
Հայք սիրեն ըզքեզ :
4· Հայք ասեն 'ի վաղ
Մեք զայն պաշտէաք
Զբնութեանն Աստուած
Վեհագոյն էակ ·
Հերի՛ք Տէ՛ր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
5· Նախախնա՛մ էից
'Ի դատ անաշառ
Զոր մեզ՝ ուսուցին
Լոյս և Բնութիւն ·
Հերի՛ք Տէր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
6· Զի՞նչ է աշխարհս ,
Եւ զի՞նչ կեանք Հային ,
Արդ հօ՞ր և արի՞ւն
Է Բաժին Նորին ·
Հերի՛ք Տէ՛ք փորձես ,
Հայք սիրեն զքեզ :

7. Զորս դա՛րէ չորս դա՛ր ,
Զի անմխիթար
Մի՛շտ լա՛յ աշխարհէ՛
Հայ Ազգն անդադար .
Հերի՛ք Տէր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
8. Զարմատ Հայ Ազգին
Զերթ կանանչ ծառո՛յն ,
Աղոցեաց կարեաց
Տապար Ոսոխին .
Հերի՛ք Տէր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
9. Հայք ըզ Թագ թողին ,
ԶԱուլին անարգեցին ,
Զսաստիչ Գաւազանն
Ցանիւն թաղեցին .
Հերի՛ք Տէ՛ր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
10. Հայք Ուխտ ուխտեցին .
Տէ՛ր ըզքեզ պաշտել .
«Սիրել ըզթշնամին ,
Զարիւն չհեղուլ »
Հերի՛ք Տէր փորձես ,
Հայք սիրեն զքեզ :
11. Զուխտ քո պահեցաք .
Սուրբ մեր ըթայան . . .
Տէ՛ր Օտարք յարեան ,
Կեանք մեր զոհ եղեն . . .
Հերի՛ք Տէր փորձես ,

Հայք սիրեն ըզքեզ ։

11. Ո՛վ Տէր արդար ես ,
Տէ՛ր գթա՛ 'ի մեզ . . .
'Ի քո սուրբ Հոգին
Միացո° ըզ մեզ . . .
Հերի՛ք Տէ՛ր փորձես ,
Հայք սիրեն զքեզ ։

ՎԵՐՋ

Սոյն փոքրիկ Պատմութեան ետքէն դրուած երգերու մէջի Յատուկ անունները տրամադիր ենք մեր գրաբառ Հայ Դիցաբանութեան միջո- ցաւ բացատրել . զոր՝ առ 'ի լնուլ զփափագ Հայազն բանասիրաց , հանդերձեալ ենք աւար- տել ։

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՔԱՆԻ ԻՆՉ ԲԱՌԻՑ

«Գլխաւոր» Ամուսին , այր կնոջ .
«Հուրան ցուրան» ստուեր կամ շուքք լերանց .
«Խալ ձկունք» խայտ ձկունք .
«Նոր Աղլին» Աւան ինչ յԱպահունիս .
«Ակոն» ծոց , կամ աչք հովտաց .
«Թեղի փայտ» ոստ թեղօշ ծառոյ .
«Ցուտ» ձետ քարբ օձու .
«Զիչխան» մացառ , ծառ Զրինջի .
«Դա է Աղլին» Աւան ինչ 'ի Բագրաւանդ .
«Բա՛լ բա՛լ» բո՛յլ բո՛յլ .
«Կուցք» բուռն ձեռին .
«Ջուլալէ» պարզէ , պաղ ։

0003646
0003647
0003648
0003649
0003650
0003651

2013

7585
7586
7587
7588
7589
7590